# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N468Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

հոկտեմբերի 2020 թվականի N ---Ն
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N468Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի «Սպառողների էներգատեղակայանքներով էլեկտրական էներգիան ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար փոխանցելու կարգը հաստատելու մասին» N468Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) Հավելվածի 15-րդ կետից հանել «(7 821 դրամ/ամիս՝ առանց ԱԱՀ-ի)», «(424 դրամ/ամիս՝ առանց ԱԱՀ-ի)», «(0,785 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)», «(1,406 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)», «(1,580 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)», «(0,757 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)» և «(1,344 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)» բառերը:

   2) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1 կետով.

«15.1. Սույն կարգի 15-րդ կետում նշված ծառայությունների վճարների $a_1$-$a_7$ մեծությունները ընդունվում են սույն կետի N1 աղյուսակում ամրագրված վճարներին հավասար.

Աղյուսակ N1

(առանց ավելացված արժեքի հարկի)

| N | Մեծությունը | Վճարի չափը |
|---|---|---|
| 1. | $a_1$ | 7 930 դրամ/ամիս |
| 2. | $a_2$ | 430 դրամ/ամիս |
| 3. | $a_3$ | 0,796 դրամ/կՎտժ |
| 4. | $a_4$ | 1,426 դրամ/կՎտժ |
| 5. | $a_5$ | 1,602 դրամ/կՎտժ |
| 6. | $a_6$ | 0,768 դրամ/կՎտժ |
| 7. | $a_7$ | 1,363 դրամ/կՎտժ |

»։

- Հավելվածի 16-րդ կետում «հավասար» բառից հետո լրացնել «սույն կետի» բառերով, իսկ N1 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ N1

դրամ/ամիս (առանց ավելացված արժեքի հարկի)

| N | Սպառողի սպառման համակարգի լարումը | Սպառողի ենթակայանի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը | Սպառողի էլեկտրահաղորդման գծերի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը |
|---|---|---|---|
| 1. | 6 (10) կՎ | 89 217 | 16 522 |
| 2. | 35 կՎ | 356 867 | 28 087 |
| 3. | 110 կՎ | 713 734 | 29 739 |

»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից։

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ**

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**